ԹՈՌՆԻԿՅԱՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԸ X Դ. ՀԱՅ–ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանում արաբական տիրապետության ժամանակ աստիճանաբար հզորացող Բագրատունիների և Արծրունիների կողքին երկրի քաղաքական ասպարեզից հեռանում էին Մամիկոնյանները և Կամսարականները։ Հետագայում Կամսարականների սերունդներից առաջ եկան Պահլավունիների՝, իսկ Մամիկոնյանների շառավիղներից՝ Թոռնիկյանների իշխանական տները։

Թոռնիկ անունը[2] *հայտնի է IX դ. Սասունում, X դ. Տարոնում և Տայքում, XI—XII դդ. Վասպուրականում և XI—XIII դդ. Բյուզանդիայում։ Այդ անվան նման տարածումը կապված էր նոր քաղաքական պայմաններում Մամիկոնյանների տարբեր շառավիղների հանդես գալու հետ։*

Թովմա Արծրունին, որքան մեզ հայտնի է, առաջինն է, որ Թոռնիկ անունով անձնավորություն է հիշատակում։ Վերջինիս որդին Բագրատ Բագրատունուն 850 թ. օղնության հասած հայ իշխանների թվում էր[3]*։ Ուրեմն, այս Թոռնիկն ապրել է VIII դ. վերջին—IX դ. սկզբներին, ամենայն հավանականությամբ, Սասունում։*

Սկսած VIII դ. վերջին քառորդից Բագրատունիները համառորեն ձգտում էին տիրանալ Մամիկոնյանների ժառանգական կալվածքներին Տարոնում։

---

[1] C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, p. 207 (*այսուհետև՝* Studies...), *«Դրիգոր Մագիստրոսի Թղթերը», բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով առաջին անգամ լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ ԺԴ։*

[2] *Ն. Ադոնցի կարծիքով Թոռնիկ անունը ծագել է «Թոռն» բառի նվազական ձևից* (N. Adontz, Les Taronites en Arménie et à Byzance, „Etudes Arméno-Byzantines" Lisbonne, *1965 թ., էջ 252 (այսուհետև՝* EAB)*։ Հնարավոր է, որ Թոռնիկ անունը կապ ունենա Թոռնավան գավառի անվան հետ։ Վասպուրականում Մամիկոնյանները հայտնվել էին դեռևս, VIII դ. երկրորդ քառորդում՝ արաբների դեմ բռնկված ապստամբության ժամանակ («Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 119)։ Թոռնավան գավառի և նույնանուն ավանի վաղ հիշատակությունը տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 53։ Եթե ճիշտ է մեր այս ենթադրությունը, ապա Թոռնավան գավառից Թոռնիկ անունը պետք է անցներ Սասունում իրենց դիրքերը պահպանած Մամիկոնյաններին, ապա նրանց մյուս ճյուղավորություններին։ Թոռնավան անվան «Թոնրավան» ձևը, որը նշում է Ն. Ադոնցը* (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, стр. 315, 317) *ժողովրդական ստուգաբանության արդյունք է։*

[3] *«Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 109։ Թովմա Արծրունու «Ի տանէն Բագրատունեաց Թոռնկայ որդի...» հաղորդման համապատասխան հատվածը Ն. Ակինյանը առաջարկում է վերականգնել հետևյալ կերպ. «Ի տանէն Բագրատունեաց<Իշխանիկ որդի ...զորոք իւրովք, ի տանէն Մամիկոնէից Յովնան <Քուրդիկ> Թոռնիկայ որդի»* (Ն. Ակինյան, *Թոռնիկյանց ճյուղագրությունը («Մատենագրական հետազոտություններ», հ. Դ., Վիեննա, 1938, էջ 50—51)։ Ըստ Հ. Անասյանի բանավոր հաղորդման, հնարավոր է, որ «Բագրեանդաց» բառը բնագրում հապավված լիներ և հետագա գրչի կողմից հասկացվեր «Բագրատունեաց»։ Երկու դեպքում էլ եզրակացությունը նույնն է՝ Թոռնիկը Մամիկոնյան էր։*

Նրանք պայքարում էին ոչ միայն բավականին թուլացած Մամիկոնյանների[4], այլև Ջահապյանների դեմ, որոնց հովանավորում էին Արծրունիները, ինչպես կարելի է եզրակացնել Վարդանի հաղորդումից[5]։ Հատկապես 774—775 թթ. Մամիկոնյանների համար այնպիսի վիճակ էր ստեղծվել, որ նրանք հիմնականում ստիպված էին քաշվել լեռնային դժվարամատչելի շրջանները, ինչպիսիք էին Սասունը, Տայքը և Արշարունիքը։ Ի դեմս IX դ. կեսերին հիշատակվող Քուրդիկ Մամիկոնյանի, նրանց մի ճյուղը մի առ ժամանակ տեսնում ենք լեռնային Բագրևանդում։

Բագրևանդին Մամիկոնյանները տիրել էին դեռևս V դ.[6] սկզբում միանձնյա, ապա, ըստ երևույթին, Արշարունիքի և Շիրակի Կամսարականների[7] հետ, որոնց հետ ազգակցական կապի մեջ էին։ VIII դ. վերջից և IX դ. առաջին կեսում Բագրևանդի Մամիկոնյանները նորից պետք է ակտիվացած լինեն Տարոնից Արտագերս[8], իսկ այնտեղից Բագրևանդ անցած Մուշեղ Մամիկոնյանի տան մյուս անդամների գործունեության շնորհիվ։ Վասպուրականի իշխանական տներից մեկն էլ խնամիացել էր Բագրևանդի Մամիկոնյանների հետ, ինչպես երևում է Թովմա Արծրունու մի հաղորդումից. «Գուրգէն որդի Ապուպելճի Վասպուրական իշխանի... ի հօրէ զՍենեքերիմայն և ի մօրէ զՄամզոնեացն... Իբրև եմուտ Բուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել գնաց Գուրգէն առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրևանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայ»[9]։ Քուրդիկի որդի Գրիգորի[10] մահից հետո Բագրեվանդն անցնում է Աշոտ Բագրատունուն։

Տարոնի Մամիկոնյանների մասին խոսելիս հարկ է ուշադրություն դարձնել Սամուել Մամիկոնյանի եղբոր՝ Շապուհի վրա, որն ամենայն հավանականությամբ որոշ ժամանակ իշխել էր Տարոնում, որպես «Մամիկոնէից տէր»՝ Սամուելի ժառանգորդ։ Ուրեմն, նա ժամանակակից էր վերոհիշյալ Թոռնիկին։ Տարոնում Բագրատունիների զորեղացման ժամանակ Մամիկոնյանների մնացորդները քաշվել էին Սասունի լեռները։

Մինչև Մուշեղի մասին խոսելը, Մամիկոնյան իշխանական տան Արտավազդի ճյուղի մասին Ղևոնդը գրում է, թե 774 թ. «համբառնայր ամենայն տամբ իւրով, գնայր ի կողմանս Վրաց աշխարհին, և ընդ նմա ամենայն նախարարք աշխարհիս... Նոքա երթեալ պատսպարէին յաշխարհին

---

4 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 247, Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 51։

5 «Վարդանայ վարդապետի Հաւաքումն պատմութեանն», Վենետիկ, 1862, էջ 76։

6 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1904, էջ 37։ Վերջին հետազոտություններից տե՛ս Studies..., էջ 209, 211։

7 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ—Ս. Ղազար, 1890, էջ 524։

8 Նույն տեղում։ Մուշեղը չէր կարող Բագրևանդից գալ (հմմտ. Գ. Գրիգորյան, Տարոնի քաղաքական դրությունը VIII դ., ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 9, էջ 45, ծան. 42), քանի որ Արտագերսում հայտնվելուց անմիջապես հետո նրան տեսնում ենք Բագրևանդում արաբների դեմ կռվելիս (Ղևոնդ, էջ 139)։

9 Թովմա Արծրունի, էջ 192—194։

10 «Գրիգոր Քուրդկայ որդի Մամիկոնէից տէր» (Թովմա Արծրունի, էջ 191), «Գրիգոր Մամիկոնեան արիաբար պահեալ զհաւատն ելանէ ի բանտէն, և գայ մտանէ ի գաւառն իւր Բագրևանդ. և կամէր ամրանալ ի գաւառն Գաբեղինից ի Գազանածակն. ուր և զկնի եօթն աւուրց մեռանի» (Վարդան, էջ 81)։ Գաբեղանքը գտնվում էր Արշարունիքի և Բագրևանդի միջև։ Ուրեմն, Արտագերսից քաշվելուց հետո այն նույնպես Բագրևանդի Մամիկոնյանների ձեռքում էր։

Եգերացւոց. և ստանայր անձամբ զիշխանութիւն անձին իւրոյ և վերայ Եգերացւոց և ի վերայ Վէռիոյ, որ են Վիրք»[11]։ Ն. Ակինյանը, հենվելով Ղևոնդի այս և, ամենայն հավանականությամբ, Վարդանի[12] այլ հաղորդումների վրա, նշում է. «Արտավազդ Մամիկոնյանի իշխանության տևողությունը հայտնի չէ մեզի։ Աճարայի իշխանությունը անշուշտ երկար ժամանակ չմնաց իր և հաջորդների ձեռքը, երբ մանավանդ տիրացավ Արտանուջին Վասակ Բագրատունի 774էն ետքը։ Հավանական է ենթադրել թե Մամիկոնյանք ամփոփվեցան Տայոց աշխարհը, ուր ի բնէ ունեին իրենք կալվածքներ։ Այստեղ երևան կուգա ժ դարու մեջ Թոռնիկյան մեկ նոր ճյուղը»[13]։

Թոռնիկյանների իշխանական տները, որոնք առաջացան Սասունում և այլա Տայքի Ասեաց-Փոր գավառում, հանդես եկան որպես Մամիկոնյան տոհմի ճյուղավորումներ։ Տայքի Ճակք գավառում Իշխանաց գյուղը «Մամիկոնյան տոհմի նստոցն էր, որի պատճառով էլ գյուղը պիտի կոչվեր Իշխանանիստ գյուղ, իսկ ամբողջ շրջակայքը՝ Իշխանանիստ ձոր»[14]։ Ինչպես տեսնում ենք, ի սկզբանե Տայքում Մամիկոնյանների կենտրոնը եղել է Իշխանքը (Իշխան գյուղ)[15], իսկ Բերդագրակ ամրոցը[16] նրանցից ճյուղավորված Թոռնիկյանների կենտրոնն էր, քանի որ, համաձայն Ս. Երեմյանի բանավոր հաղորդման, դրա մոտ գտնվող Ջորդվանքը (վրաց. Օթխթա-եկլեսիա, այսինքն «չորս եկեղեցի») դառնում է նրանց հոգևոր կենտրոնը։ Տայքի Թոռնիկյանները քաղկեդոնական էին և այդտեղ նստող եպիսկոպոսը, ենթարկվելով վրաց կաթողիկոսին, կրում էր «Ջորգուանելի» (բառացի «Ջորդուանեցի») տիտղոսը։ Թեմական առաջնորդի պատիվը ժառանգական դարձնելու նպատակով ժամանակի ընթացքում այս պատվանուն տիտղոսը դառնում է անձնանուն՝ «Ջորդուանել» կամ «Ջորդվանել»։ Այս անունը շատ տարածված էր Տայքի Թոռնիկյանների ընտանիքում։ Հետագայում Սասունում այս անվան առկայությունը խոսում է Տայքի և Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների ճյուղերի մերձենալու մասին։

Սասունի Թոռնիկյանները, ինչպես երևում է Կոստանդին Ծիրանածինի հաղորդումներից[17], X դ. սկզբներից, ի հակադրություն Տարոնի Բագրատու-

---

11 Ղևոնդ, էջ 138—139։ Կ. Թումանովը նշելով, որ այստեղ չափազանցություն կա, գտնում է, որ, այնուամենայնիվ, Արտավազդը զգալի սարածքի էր տիրացել (C. Toumanoff, The Mamikonids and the Liparitids, „Armeniaca", Venise, 1969, էջ 129, ծան. 19)։ Տայքի, որպես Մամիկոնյանների IV—VIII դդ. ժառանգական տիրույթի մասին տե՛ս նաև Н. Адонц, նշվ. աշխ., էջ 24։ Studies..., էջ 452, «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 107 (այսուհետև՝ «ՀԺՊ»)։

12 Վարդան, էջ 77։

13 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 52։

14 Մ. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 54։ Իշխանանիստի նկարագրությունը տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հ. II, Երևան, 1956, էջ 553—554, հմմտ. Մ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 602, ծան. 2, էջ 608։

15 «Մեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 143։

16 Մեծ Հայքի Տայք նահանգի Ասեաց-Փոր գավառում գտնվող Բերդագրակ գավառակը նույնանուն ամրոցով IV—VIII դդ. եղել է Մամիկոնյանների կալվածքը (Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս 1, Ասիա, Վենետիկ, 1806, էջ 132—133, Հ. Տաշյան, Տայք, Դրացիք և Խոտորջուր, Վիեննա, 1973, հ. Ա, էջ 207 և այլն)։

17 Constantine Porphyrogenitus, De Administrando Imperio, Greek

նիններ, սկսում են ակտիվանալ, նույնիսկ իշխելով Տարոնի արևելյան մասի վրա։ Դա տեղի էր ունենում Բյուզանդիայի միջամտությամբ, որի վերջնական նպատակն էր երկրամասը կցել կայսրությանը։ 966 թ. Գրիգորիկ Տարոնացու որդու՝ Աշոտ Բագրատունու, մահից հետո նրա կալվածքներն անցնում են Բյուզանդիային[18], իսկ Տարոնի մնացած մասը մինչև 990 թ. մնում է Տարոն-Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների ձեռքում, որոնք անցել էին Անի-Շիրակի Բագրատունիների սյուզերենության տակ։ Սրա պերճախոս վկայությունն է 974 թ. Աշոտ Գ Ողորմածի (953—977) Տարոնի սահմանների մոտ հայտնվելը՝ Ամիդի վրա Հովհաննես Չմշկիկի արշավելու ժամանակ[19], որի երթուղին անցնում էր Տարոն-Սասունի արևմտյան մասով։

Ի տարբերություն Տայքի Թոռնիկյանների, Տարոն-Սասունի Թոռնիկյանները հայոց եկեղեցու հետևորդներն էին։ Տայքի Մամիկոնյան-Թոռնիկյանների պետական-քաղաքական և հոգևոր գործունեության հետ պիտի կապել նրանց տարածումը Բյուզանդիայում և, որպես կայսերական պաշտոնյաներ, Հայաստանի այն շրջաններում, որոնք X—XI դդ. կցվեցին կայսրությանը։

Տայքի Թոռնիկյանների ճյուղին էր պատկանում Կոստանդին Միրանածինի հիշատակած պրոտոսպաթար Զուրվանելը (Զորդվանել), որը Տայքի կյուրապաղատի կողմից տարածքային հարցերի լուծման նպատակով ուղարկվել էր հիշյալ կայսեր մոտ[20]։ Դա տեղի էր ունեցել մինչև Բասենի բաժանումը[21] (950—952 թթ.)։ Ինչպես ցույց է տվել Ն. Ակինյանը, այս Զորդվանելը վրացերեն երկու հիշատակարաններում (X դ. երրորդ քառորդ) վկայված Հովհաննես-Թոռնիկի, Հովհաննես-Վարազվաչեի և նրանց եղբայրների հայրն էր[22]։

Ն. Ակինյանը կարծում է, որ այս Զորդվանելի եղբայրներն էին Նիկողայոս և Լևոն Թոռնիկյանները[23]։ Իսկ եթե նրանք, ըստ հետազոտողի, եղբայրներ էին, սերված X դ. սկզբներին ապրած ինչ-որ Թոռնիկից, ուրեմն «կրկին անուններ կկրեն. մեկը անշուշտ տրված է իրենց երբ կգտնվեին հունական ծառայության մեջ»[24]։ Այստեղից հետևում է, որ Ն. Ակինյանը Նիկողայոսի և Լևոնի առաջին անուններն է համարում Աշուշա և Ապուհարպ[25], իսկ նրանց

---

text with an English transl. by R. J. H. Jenkins, Budapest, 1949, 43 (այսուհետև՝ D. A. I), Կոստանդին Միրանածին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 4—10 (այսուհետև՝ Կոստանդին Միրանածին)։

18 «Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական» Ս. Պետերբուրգ, 1885, էջ 183։

19 «Մատթէոս Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 17—18։

20 D. A. I., 45.103, Կոստանդին Միրանածին, էջ 16։

21 D. A. I., 45.100—175։

22 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 55, 57 և 60։

23 Ն. Ակինյանը նշում է, որ Նիկողայոսը և Լևոնն էին աքսորվել (նույն տեղում, էջ 60), այնինչ Կոստանդին Միրանածինը սրանց ու Մարիանոսի և այլոց միջոցով 945 թ. հունվարի 27-ին ձերբակալում է իր մոտ ճաշի հրավիրված Ռոմանոս I Լեկապենոսի որդիներին (Theophanes Continuatus, Bonnae, 1838, էջ 437, Georgius Cedrenus, Bonnae, 1839, էջ 324)։

24 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 60։

25 Քանի որ վրացերեն հիշատակարանում սրանք են վկայված որպես Զորդվանել Ա-ի եղբայրներ։

հորը տարբերում է Միրանածինի կողմից Տարոնում հիշատակվող Ապոգանեմի որդուց[26]։

Ն. Ադոնցը կարծում է, որ Նիկողայոսը և Լևոնը նշված Ապոգանեմի որդի Թոռնիկից էին սերում, գրելով, որ Միրանածինի հիշատակությունը վերջինիս մեկ որդու մասին պետք է երկուսին վերաբերի, իսկ Թոռնիկին համարում է Բյուզանդիայի Թոռնիկյանների ճյուղի նախահայրը[27]։ Նշենք, որ Մարկվարտը և հատկապես Ն. Ադոնցը, ուղղակի հետևելով Միրանածինի հաղորդումներին, այն կարծիքին են, որ Ապոգանեմը և նրա որդի Թոռնիկը Բագրատունի էին[28]։ Ուրեմն, ըստ Ն. Ադոնցի, Բյուզանդիայի Թոռնիկյանները Բագրատունիներից էին սերում։ Ա. Կաժդանը համամիտ է Ն. Ադոնցին, նաև նշելով, որ Լևոնի եղբոր Նիկողայոսի այս Թոռնիկի որդի լինելու մասին է վկայում Միրանածինի փարիզյան № 2009 ձեռագրի վրա «Մագիստրոս Նիկողայոս Թոռնիկի» մասին եղած նշագրումը[29]։ Միրանածինը Ռոմանոս I Լեկապենոսի որդիների՝ Ստեփանոսի և Կոստանդնի ձերբակալմանը մասնակցած Նիկողայոս և Լևոն Թոռնիկյանների մասին չի խոսում, թեև հատկապես այդ առթիվ նրանց պետք է շատ լավ ճանաչեր։ Եթե նրանք իրոք Ապոգանեմի թոռներն էին, նա չէր կարող սխալվել, հաղորդելով, որ Թոռնիկը մեկ որդի ուներ։ Ինչ-որ չափով նման աղգակցական կապի դեմ է խոսում նաև այն, որ Ապոգանեմի որդի Թոռնիկը X դ. սկզբին անչափահաս էր և մահացավ 30-ական թվականների առաջին կեսում։ Ուրեմն, նրա որդին 945 թ. կարող էր տակավին երիտասարդ լինել, եթե նաև նկատի ունենանք, որ Թոռնիկի մահից հետո Միրանածինը նրա որդուն բնորոշում է „τὸ παιδίον"[30] բառով, որը վերաբերում է մինչև 7 տարեկան երեխային[31]։ Հակառակ նշված հետազոտողների, Ն. Ակինյանը Տարոնի թե՛ Գրիգորիկ Տարոնացու, և թե՛ Ապոգանեմի ճյուղերը Մամիկոնյան է համարում[32]։ Սակայն, կարծում ենք, Գրիգորիկ Տարոնացին և Ապոգանեմը եղբայրներ չէին։ Առաջինը և նրա ժառանգները պատկանում էին Տարոնի Բագրատունիների ճյուղին, իսկ երկրորդը, նրա որդի Թոռնիկը և նրանց հարազատները՝ Տարոն-Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների ճյուղին։

---

26 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 66։

27 EAB, թ. 252։

28 J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 495: EAB, էջ 252։

29 А. П. Каждан, Армяне в составе господствующего класса Византийской империи в XI—XII вв., Ереван, 1975, стр. 47. Քանի որ նշագրման մեջ խոսքը Թոռնիկի միայն մեկ որդու մասին է, որի մորը Թոռնիկի մահից հետո Ռոմանոս I-ը հատկացրեց Խաղտիքի Պսոմաթեոսի վանքը (D. A. I., 43.177), կնշանակի, որ այդ մագիստրոս Նիկողայոսին չպետք է շփոթել Լևոնի եղբոր Նիկողայոսի հետ։ Հակառակ դեպքում պետք է կարծել, որ հետագա նշագրողը ծանոթ լինելով Նիկողայոս և Լեոն Թոռնիկյանների մասին եղած հաղորդումներին, աշխատել է ծանոթագրել Թոռնիկ անունը։ Սակայն այս դեպքում հարց է ծագում, ինչո՞ւ է նա նշում Նիկողայոսի, այլ ոչ թե Լևոնի անունը։ Հավանական է, որ նա այդ անում է De ceremoniis-ի 96-րդ գլխում խոսվող 963 թ. կապակցությամբ Նիկողայոսի մասին եղած հիշատակության հիման վրա։ Եթե այդպես է, ուրեմն Նիկողայոս մագիստրոսը նույն ինքը՝ Լևոնի եղբայրն է, սակայն այս դեպքում ոչ մի առնչություն չպետք է ունենա Ապոգանեմի որդի Թոռնիկի հետ։

30 D. A. I., 43.174.

31 Greek-English Lexicon, compiled by H. G. Liddel and R. Scott. Oxford, 1951, vol. II, p. 1287.

32 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 80—81։

Ինչ իրոք, Թոռնիկի որդու՝ կայսրության սահմանները տարվելը կնշանակեր, որ եթե նա այնտեղ մնացած լիներ և սերունդ թողներ, ապա Բյուզանդիայի Թոռնիկյաններից ոմանք կարող էին նրա շառավիղներից լինել։ Սակայն հիմնական ճյուղը, որից սերել է Բյուզանդիայի Թոռնիկյանների ընտանիքը, եղել է Տայքի և Դերջանի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների ճյուղը, իսկ Տարոնի մի մասի Բագրատունիներից սերել է Բյուզանդիայի „Ταρωνίτης" ընտանիքը[32]։

Լևոն և Նիկողայոս Թոռնիկյանների առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ, ամենայն հավանականությամբ, վերջինս նույն ինքը՝ 963 թ. դեպքերի կապակցությամբ հիշատակվող Նիկողայոս Թոռնիկն է։ Նա և վերոհիշյալ Մարիանոսը սպարապետ Հովսեփ Վրինգասի կողմնակիցների թվում հանդես եկան Նիկեփոր Փոկասի դեմ, սակայն պարտվելով, փախուստի դիմեցին։ Ո՞ւր էր փախել Նիկողայոս Թոռնիկը։

Ծիրանածինի երկրորդ գահակալության ժամանակ Նիկողայոս և Լևոն Թոռնիկյանները հիմքեր ունեին նրա լավ վերաբերմունքին արժանանալու։ Իսկ Նիկեփոր Փոկասի դեմ դուրս գալու փաստից երևում է, որ Նիկողայոսը մինչ այդ կայսրության ավագանու կազմում զգալի դեր էր խաղում։

Հայաստանի հանդեպ կայսրության վարած քաղաքականության դրսևորումներից մեկն էլ այն էր, որ Բյուզանդիա հեռացած հայ իշխանական տների անդամներից ոմանք, պաշտոններ ստանալով, վերադառնում էին իրենց հայրենի երկիրը։ Նման բան էր տեղի ունեցել նաև Լևոնի հետ։ Կարծում ենք, որ Ուռհայեցու կողմից բերվող 974/5 թթ. Հովհաննես Չմշկիկի՝ Աշոտ Գ Ողորմածին գրված նամակում հիշատակվող Լևոնը[34] նույն ինքը՝ Լևոն Թոռնիկյանն էր, որի մոտ Դերջան էր փախել եղբայրը՝ Նիկողայոսը։

Այս առումով հետաքրքրական է Կոմսաձագերի ծագման հարցը։ Ասողիկի հաղորդումից երևում է, որ նրանք հայ էին[35]։ Նա գրում է. «Զի էին նոքա երկու եղբայրք[36], որք Կոմսաձագքն կոչէին, անուն երիցուն Սամուէլ, յաղդէս

---

32 Աշոտի որդիներից առաջ Տարոնի Բագրատունիներից Բյուզանդիա գնացած և այնտեղ հաստատվածներից էին (IX—X դդ. շեմին) Դավթի որդիները, որոնցից մեկի անունը Աշոտ էր (D. A. I., 43.57)։ Ինչպես կարծում է Ն. Ադոնցը, Անի—Շիրակի Բագրատունիներից տարբերելու համար Տարոնի Բագրատունիներին անվանում էին «Տարոնիտս» («Տարոնցի») (N. Adontz. Observationes sur la generalogie des Taronites, EAB, էջ 343)։

33 «Եւ յանափոռաէն պռոտոսպաթրին Դերջանայ Լեւոնի և Տարաւնոյ զորավարին...» (Մատթէոս Ուռհայեցի, էջ 27, EAB, էջ 143—144)։

35 Գ. Օստրոգորսկին գտնում է, որ Կոմետոպուլների (Կոմսաձագք) նախապատմության մասին ոչ մի իրական տեղեկություն չկա, իսկ Ասողիկի հաղորդումը նրանց հայկական ծագման մասին վստահելի չի համարում (G. Ostrogorsky, Geschichte des Byzantinischen Staates, München, 1963, էջ 249)։ Վ. Զայրտը վերանայելով Գ. Օստրոգորսկու կարծիքը, Դերջանից եկած չորս Կոմսաձագերին ծագումով հայ է համարում (հմմտ. EAB, էջ 387) և նշում է, որ նրանց հայրը կոմս էր, այսինքն մի ստորաբաժանման՝ τάγμα-ի, հրամանատար (W. Seibt. Untersuchungen zur vor- und frühgeschichte der „Bulgarischen" Kometopulen, «Հանդէս ամսօրեայ», 1975, № 1—3, էջ 66—99)։

36 Ն. Ակինյանը, ինչպես և հիմնականում ընդունված է, նշում է, որ պետք է կարդալ «չորս» (Դավիթ, Մովսես, Ահարոն և Սամուէլ) (Ն. Ակինյան, Ստեփանոս Ասողիկ եւ Կոմսաձագք», «Հանդէս ամսօրեայ», 1955, № 3—6, էջ 125), (այսուհետև՝ «Կոմսաձագք»)։ Եղբայրները միասին եղել են 976—987 թթ., իսկ Սամուելը թագավորեց մինչև 1014 թ. (The Cambridge Medieval History, Cambridge, vol. IV, p. 779)։

Հայոց, ի գաւառէն Դերջանայ»[37]։ Այժմ գիտության մեջ ընդունված է, որ Կոմսաձագերի հոր անունը Նիկողայոս էր, իսկ մորը՝ Հռիփսիմեի[38]։ Ն. Ակինյանը կարծում է, որ Դերջանից Կոմսաձագերի Մակեդոնիա տարվելը, ապա այնտեղից նրանց փախուստը բուլղարների կողմը, տեղի էր ունեցել 970 թ.[39]։ Իսկ ինչպես վերը նշեցինք, Նիկողայոս Թոռնիկը 963 թ. դեպքերից հետո փախել էր Դերջան։ Ժամանակը, տեղը և անունները համընկնում են։ Ուրեմն, համոզվածությամբ կարելի է ասել, որ Նիկողայոս Թոռնիկն էր Կոմսաձագերի հայրը[40]։ Նա իր կնոջ՝ Հռիփսիմեի և որդիների հետ 963—970 թթ. գտնվում էր Դերջանում, իր եղբոր՝ Լևոնի մոտ։ Ինչպես երևում է, Դերջանը Մամիկոնյանների մի ճյուղի կալվածքն էր դարձել[41]։ Փաստերը ցույց են տալիս, որ Դերջանի Մամիկոնյան-Թոռնիկյանների ճյուղի առնչությամբ «Կոմսաձագք» անվան օգտագործումը պատահական չէր։ Որքանով մեզ հայտնի է, հայկական իշխանական տներից թե՛ կոմս տիտղոսը[42], և թե՛ Կոմս անունը[43] ընորոշ էր Մամիկոնյաններին։

Դերջանի Մամիկոնյանները սերտ ազգակցական կապերի մեջ լինելով Տայքի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների հետ, զգալի չափով ակտիվացել էին արաբների լուծը թոթափելուց հետո։ Բյուզանդիայի առաջխաղացումով X դ.

---

37 Ա դ ո ն ց, էջ 244։ Վ. Զլատարսկին բերում է այդ հաղորդումը, սակայն առանց հիմնավորելու դուրս է թողնում «Դերջան» բառը (В. Златарски. История на Българската държава през средните векове, т. I, ч. 2. София. 1971, стр. 626—633).

38 N. Adontz, Samuel l'Arménien, roi des Bulgares, EAB. էջ 384—385։ Գ. Օստրոգորսկին (նշվ. աշխ., էջ 249) անհիմն է համարում Ն. Բլագոևի կարծիքը (Н. П. Благоев. Братята Давид, Моисей, Аарон и Самуил, Годишник на Софийск. Унив. Юрид. ф-т. 37. 14 (1941/42 2—8 ff), որ «կոմետ» Նիկողայոսը նախարուլղար Ասպարուխի և նրա կնոջ՝ Հռիփսիմեի, դարմն էր։ Իսկ Ի. Ջիմովը և Վ. Ջիմովան մի արձանագրությունում վերականգնում են «Никола и Рипсиме» անունները, միայն նշելով, որ Դավիթը, Մովսեսը, Ահարոնը և Սամուէլը տեղական իշխանի՝ կոմս «Նիկոլայի» որդիներն էին (И. Зайков и В. Зайкова. Битолски надпис на Иван Владислав самодержец Български. София. 1970, стр. 114—115)։

39 «Կոմսաձագք», էջ 126։

40 Այս առնչությամբ Ն. Ադոնցը միայն նշում է, որ Կոմսաձագերի հայրը՝ Նիկողայոսը, ժամանակակից էր իր հիշատակած Թոռնիկի որդի Նիկողայոսին (այսինքն՝ Ապոգանեմի թոռանը—Է. Դ.)։ Նույն տեղում նա հիշատակում է նաև այլ Նիկողայոսների, որոնցից մեկը խաղտիքի հարկահավաքն էր, իսկ մյուսը՝ Լևոն Իմաստասերի ժամանակակիցը (EAB, էջ 386—387)։

41 Հովհաննես Դրասխանակերտցին նշում է, որ, երբ Աշոտ Երկաթը Կոստանդնուպոլսում էր, ինքը եկավ Դերջան և չնայած շատ հրավերներին, չգնաց մայրաքաղաք, զգուշանալով քաղկեդոնականությանը հարելու մեջ մեղադրվելուց («Հ ո վ հ ա ն ն ու կ ա թ ո ղ ի կ ո ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ւ ո յ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 286)։ Եզրակացնում ենք, որ Դերջանը այդ ժամանակ դեռևս չէր կցվել կայսրությանը և գտնվում էր տեղական իշխանական տան ձեռքում։

42 Մամիկոնյանների համար «կոմս» տիտղոսը նոր չէր։ Ղևոնդը նշում է. «որդի Հրանոտայ կոմսի ի տանէ Մամիկոնեան, որոյ անուն էր Մուշեղ» (Ղ ե ո ն դ, էջ 139)։ Պարզ է, որ VIII դ. Հայաստանում «կոմս» տիտղոսը չէր կարող տրվել և կամ արտահայտել այն վիճակը, որն այն իմաստավորում էր։ Հնարավոր է, որ Հրահատը այն ստացել էր բյուզանդական ծառայության մեջ գտնվելով, իսկ Հայաստանում կոմս տիտղոսը դեռևս հայտնի էր երկրի մի մասի վրա բյուզանդական գերիշխանության հաստատման ժամանակաշրջանից. «եւ դարձաւ Խոսրով ի տեղի իւր, և գնաց Արշակ յԵկեղեաց... եւ այնուհետև ոչ ևս կացուցին Յոյնք ի բոլոր նի իւրեանց թագաւոր... և աշխարհին իւրանց մասինն կացուցին Յոնք կոմէս իշխանս» («Մ ո վ ս ի ս ի Խ ո ր ե ն ա ց ւ ո յ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 316)։

43 Փ ա ւ ս տ ո ս ի Բ ի ւ զ ա ն դ ա ց ւ ո յ Պատմութիւն Հայոց», Պետերբուրգ, 1883, էջ 201։

20-ական թվականներին Հովհաննես Կուրկուտսի և նրա եղբոր՝ խաղտիքի զորավար Թեոփիլոսի արշավանքներից հետո Դերջանը աստիճանաբար կցվում է կայսրությանը, դառնալով բանակաթեմ[44]։

Չնայած Բյուզանդիայի քաղաքական ոլորտում գտնվելուն և քաղկեդոնականության հարելուն, Տայքի և Դերջանի Թոնիկյաններն առիթը չէին բաց թողնում դուրս գալու կայսրության դեմ։ Ի տարբերություն Հովհաննես-Թոնիկի, որն անձնական մասնակցություն ցուցաբերեց Վարդ Սկլերոսի գլխավորած ապստամբության (976—979) ճնշման գործում[45], նրա եղբոր՝ Հովհաննես-Վարազվաչեի[46] որդի Զորտուանելը[47] մասնակցում է կայսրության դեմ 987—989 թթ. բռնկված ապստամբությանը. «Այլ դեռ ևս մնացեալ էր յապստամբացն, որ ընդ Փակասուն Վարդայ՝ Զորտուանէլ մաժիստռոսն եղբօրորդի Թոնկայ աբեղայի, որ բռնացեալ էր ի կողմանս Դերջանայ և Տարօնոյ։ Յորոյ վերայ առաքէ թագաւորն Վասիլ զԺանն պատրիկ, որ և Պոռտեղ կոչիւր։ Որ եկեալ պատերազմեցաւ միանգամ. և յերկրորդումն սպան զնա ի դաշտին Բագաոճոյ, ի Դերջան գաւառի, ի Նէթ թուականին։ Եւ յայնմհետէ խաղանայր աշխարհն Յունաց, ընդ ձեռամբ Վասլի նուաճեալ»[48]։

Անհրաժեշտ է նշել, որ Թոնիկյանները սերտ համագործակցում էին Դավիթ կյուրապաղատի հետ։ Այս ժամանակ նա նույնպես Վարդ Փոկասի կողմն էր, որի պարտությունից հետո ստիպված եղավ իր հողերը կտակել կայսրությանը։ Ուրեմն, Զորդվանելը (Բ) միայնակ չէր գործում, այլ Արևելքում իշխանների մի հակավասիլյան խմբավորում էր ստեղծվել, որը ցանկանում էր Վարդ Փոկասին կայսր հռչակել, հույս ունենալով նրանից արտոնություններ ստանալ։ Ապստամբներին, ըստ երևույթին, միացել էին Տարոնի՝ Բյուզանդիային չանցած մասի, ինչպես և Սասունի Մամիկոնյաններ-Թոնիկյանները և այս ապստամբության ճնշումից հետո էր, որ Տարոնի մնացած մասը, բացառությամբ Սասունի, անցավ կայսրությանը։ Հետագայում Բերկրիի գրավման առնչությամբ հիշատակվող «Իշխանն Հայոց» Գանձին[49]

---

44 D. A. I., 53.507, Կոստանդին Ծիրանածին, էջ 26։ «Էսկուրիալի տակտիկոնում» (971—975) հիշատակվում է Դերջանի զորավարը („ὁ στρατηγὸς Δερζηνῆς", տես՝ N., Oikonomides. Les listes de preseance Byzantines des IXe et Xe siecles, Paris, 1972, էջ 267)։ Այդտեղ Դերջանը և Տարոնը առանձին են նշված (նույն տեղում, էջ 265)։ Սա հիմք է տվել կարծելու, որ Ուռհայեցին «Դերջանի պրոտոսպաթար և Տարոնի զորավար» ասելով նկատի է ունեցել ոչ թե մեկ, ինչպես առաջինը ենթադրել է Ն. Ադոնցը (EAB, էջ 141—147), այլ տարբեր անձնավորությունների (К. Н. Юзбашян, «Эскуриальный тактикон» новый византийский источник по истории Армении (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 5, էջ 95)։

45 Ասողիկ, էջ 192։

46 Ս. Երեմյանի կարծիքով Հովհաննես-Վարազվաչեն է հիմնադրել Վաչեաոր վանքը, որը գտնվում էր Տայքի Ճակք գավառում (տե՛ս Ս. Երեմյանի քարտեզը «Հայաստանը և հարևան երկրներ 855—953 թթ.» («ՀԺՊ», հ. III)։

47 Սրա մասին հաղորդում են երկու վրացերեն հիշատակարաններ, որոնց հայերեն թարգմանությունը բերում է Ն. Ակինյանը («Զորտվանել զորավար», «Զորտվանել էխուսովիտ» («Թոնիկյանց ճյուղագրություն», էջ 56 և 58)։ Նա մագիստրոսի կոչումով պետք է հաշորդած լիներ վերոհիշյալ Լևոնին։

48 Ասողիկ, էջ 251։ Ն. Ակինյանը ծանոթ է Ասողիկի կողմից նշվող թվականներին, սակայն Վարդ Փոկասի ապստամբությունը դնում է 976—978 թթ. («Թոնիկյանց ճյուղագրություն», էջ 67), այնինչ այդ ժամանակ վերջինս Վարդ Սկլերոսի ապստամբությունը ճնշող ուժերի գլխավոր հրամանատարն էր։

49 Մատթեոս Ուռհայեցի, էջ 74—75։ Իբն-ալ Ասիրի մի հաղորդման հիման վրա եզրակացություն է արվել, որ Գանձին Բերկրիի կառավարիչն էր (Ա. Ալպոյաճյան,

զորավար էր նշանակվել բյուզանդական վարչական միավորի վրա, որի կազմում էր, ամենայն հավանականությամբ, Տարոնը։ Կարծում ենք, որ Գանձին բյուզանդական ծառայության մեջ գտնվող այն Մամիկոնյաններից էր, որոնք անցել էին Բյուզանդիա՝ ծառայության, իսկ այժմ կայսրությունը նրանց պաշտոններ էր տալիս Արևելքում[50]։

Այսպիսով, պատմական ասպարեզում Թոռնիկյանների հանդես գալը պայմանավորված էր արաբական նվաճումներով, Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությամբ և Հայաստանի ֆեոդալական մասնատվածությամբ։

ПОЛИТИЧЕСКАЯ РОЛЬ ТОРНИКЯНОВ В АРМЯНО-ВИЗАНТИЙСКИХ ОТНОШЕНИЯХ В X в.

ЭДУАРД ДАНИЕЛЯН

Резюме

Принадлежащие к различным ветвям феодальной семьи Мамиконянов, Торникяны известны в Сасуне с IX в., Тароне и Тайке — X в., Васпуракане — XI—XII вв. и Византии — XI—XIII вв. Торникяны Сасуна — Тарона в основном были последователями армянской монофизитской церкви, а Тайка — халкедонитской грузинского толка и нередко назывались «нвирами».

Семья «Тароннтов» Византин происходит от Багратидов части Тарона.

Появление «Торникянов» в Византии и в качестве византийских государственных служащих в тех областях Армении, которые постепенно были аннексированы империей, в основном, необходимо связать с государственно-политической карьерой Мамиконянов-Торникянов Тайка. Факты показывают, что болгарская царская династия Комитопулов происходит от Мамиконянов-Торникянов Дерджана — Тайка.

Выступление Торникянов на исторической арене было обусловлено арабскими завоеваниями, захватнической политикой Византии и феодальной раздробленностью Армении.

Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 243, Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 201)։ Սակայն Ուռհայեցու հաղորդումներից երևում է, որ Գանձին զորահավաք էր կատարել Բերկրիից արևմուտք ընկած շրջանից։ Պետք է կարծել, որ արաբ պատմիչը վավերագրել է այն իրողությունը, երբ Գանձին մինչև սպանվելը կարճ ժամանակով դրավեց Բերկրին։

50 Գանձին նույնացնելով Քրիսելիոսի հետ, Կ. Ցուգբաշյանը ենթադրում է, որ նա Բուլղարիայի հայ էր («Повествование варданета Аристакеса Ластивертци, перев. с древнеарм., вступ. статья, коммент. и приложение К. Н. Юзбашяна, М., 1968, стр. 153, ком. 15). Ա. Կաժդանը քիչ հավանական է համարում այդ նույնացումը («Армяне в составе господствующего класса Византийской империи», стр. 123).